№ 25 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 9 ՅՈՒԼԻՍԻ 1894 № 25

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն կողմով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Շաւիղը» եւ իւր հակառակորդները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Համադանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Կովկասից. Արտաքին լուրեր.—Յայտարարութիւններ:

„ՇԱՒԻՂԸ“ ԵՒ ԻՒՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ

Մենք մեզ պարտք ենք համարում մի քանի խօսքով բացատրութիւն տալ թէ ինչու երկու շաբաթ „Շաւիղը“ լոյս չը տեսաւ:

Վեց ամսից ի վեր որ փոքրիկ շաբաթաթերթը սկսել է հրատարակուիլ, մի խումբ մարդիկ որոնց չը գիտենք ինչ անուն տալ, բամբասանք, չարախօսութիւն, մեքենայութիւն. վոնդաւոր ակնարկութիւններ, մէկ խօսքով, ինչ ասես չեն խնայում այդ փոքրիկ թերթի գոյութիւնը ջնջելու համար: Դուք կը տեսնէք մի քանի ծանօթ անձնաւորութիւններ. որոնք շրջող մանրավաճառների նման, կը հասնեն ամեն տուն, ամեն խանութ, և „բարի լոյսի“ հետ կըսկսեն բաց անել զրպարտութիւնների տոպրակը:

„Շաւղի“ ուշադիր ընթերցողները նկատած կը լինեն անշուշտ որ նա մինչև այժմ ոչ մի կերպով առիթ չէ տուել այդքան կրքերի յուզման, և ինչպէս ասում է Ֆրանսիական առածը, արժանի չէ եղել ոչ այնքան մեծ պատուի, ոչ այդ անպատուութեան: Մի թերթ ամբողջապէս նուիրուած կրթական հարցերի, որ խոյս է տուել, որքան կարելի է, տեղական վէճերից և բանակռուից, չէր կարող այդքան ցասումների տեղի տալ, և այդ իսկ նկատումով՝ „Շաւիղը“ արժան չէ համարել մինչև անգամ իւր թերթերի մէջ յիշատակութիւն անել այդ մասին:

Բայց ընթերցողը սխալուած կը լինի մտածելով որ այդ բամբասողները բաւականանում են միայն խանութների մէջ դատարկախօսութիւններով. այդ անսկզբունք մարդիկ ամեն բան ոտքի տակ են տալիս երբ որ իրանց վրէժխնդրութեան ալիքների թումբը խորտակւում է: Աւելի քան մի անգամ „Շաւիղը“ պարտաւորուեցաւ բացատրութիւններ տալ տեղական կառավարութեան իւր մասին եղած ակնարկութիւնների համար, և հերքել իւր վերայ դրուած ամբաստանութիւնները: Վերջին մեքենայութիւնը որ ըսպառնում էր վտանգել „Շաւղի“ գոյութիւնը գալիս է Նոր-Ջուղայից: Այն տեղի հայերից մի քանի հոգի, որոնք երևի չեն կարողանում հանդուրժել „Շաւղի“ քննադատութեանը, որը լոյս է հանում իրանց ստոր արարքները, աշխատել են տեղական կառավարութեան այն սխալ գաղափարը տալ որպէս թէ „Շաւիղը“ քննադատութիւններ է պարունակում Սպահանի կառավարութեան դէմ: Ի հարկէ այդպիսի մի ամբաստանութիւն անելը աւելի դիւրին է, քան հաստատելը, և Կայսերական արդարադատ կառավարութիւնը, մանրամասն քննութիւնից յետոյ, վերահասու եղաւ մեր անմեղութեան: Մեզ մնում է միայն զարմանալ այդ զրպարտիչների տխմարութեան վերայ, որ կարծում են թէ կարելի է այդպիսի անհիմն ամբաստանութիւնները հալած իւղի տեղ անց կացնել, և շնորհակալ լինել մեր լուսամիտ կառավարութեան իւր անաչառութեան համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մի ակնարկ Լիլավայի երկսեռ դպրոցների հոգաբարձութեան գործունէութեան վերայ:

Յունիս 12-ին նախագահութեամբ նորին բարձր սրբազնութեան՝ տեղի ունեցաւ Լիլավայի Թաղի երկսեռ Հայկազեան եւ Հայկանուշեան դպրոցների նոր հոգաբարձութեան ընտրութիւնը: Նախ քան ընտրութիւնը՝ նախկին հոգաբարձութեան անդամներից պ. Մելիք Աբրահամեանը կարդաց իրանց քառամեայ գործունէութեան տնտեսական հաշիւը, որից երևեցաւ հետեւեալը. Նախկին հոգաբարձութիւնից սր. պ. Թ. Ա., Ա. Մելիք Ա., Բ. Մելիք Ս., Մ. Յ., Ն. Գ., ստացել են ընդամենը 38 Թուման որպէս նախկին տարիների մուտքի աւելորդ, եւ 4 տարի ուսումնարանի տնտեսականը կառավարելուց յետոյ, նորա համար կազմելն մի բաւական կոկիկ դրամագլուխ, այն է 4261 Թուման: 90—94 ուսումնական տարեշրջաններում տարեց-տարի Լիլավայի ուսումնարանները աչքի ընկնող քայլերից ըսկսեց է յառաջադիմել, այնպէս որ շատերին զարմանք էր պատճառում: Բերդաթաղի Արամեան երկսեռ ուսումնարանների հոգաբարձուները Լիլավայի ուսումնանների յառաջադիմութիւնը տեսնելով՝ իրանք էլ բացել էին իրանց փակուած IV դասարանը եւ մտադիր են այս տարի էլ V էլ բանալու:

91—92 տարեշրջանում նրանց գործունէութիւնը պէտք է համարել իրանց գործունէութեան ոսկեդարը: Այդ տարեշրջանումն էր որ կազմակերպուեցաւ կանանց մէջ „Հայուհեաց ընկերութիւնը“, իսկ ուսուցիչները տեսնելով տեղացի արհեստաւորների տգիտութիւնը, կազմեցին մի քանի ժողովներ, ընտրեցին մի վարչութիւն, որը բացեց կիւրակնօրեայ դպրոց:

Երբ կիւրակնօրեայ դպրոցի վարչութիւնը խնդրեց Լիլավայի հոգաբարձուներից իրանց իշխանութեան տակ գտնուած ուսումնարաններից մի սենեակ, որ կարողանայ աշակերտներ հաւաքել եւ դասեր աւանդել, հոգաբարձուները ոչ միայն յօժարութեամբ տուեցին այդ, այլ եւ հանգանակութիւն բացեցին իրանց շրջանում, տուեցին ամբողջ երեք ծմեռուայ վառելափայտն եւ դրեցին ուսումնարանի ծառան կիւրակնօրեայ դպրոցի վարչութեան դրամագրութեան տակ:

91—92-ից էր, որ առաջին անգամ Լիլավայի ուսուցչական խումբը Լիլավայի երիտասարդների հետ, պատրաստելով բէմ սկսեց ներկայացումներ տալ, որոշ արդիլուած էր ինչ ինչ պատճառներով: Այստեղ էլ հոգաբարձութիւնը անգործ չը մնաց, նորանք էին, որ ծախում էին տոմսակները, դորանք էին կառավարում բուֆէտը եւ սրահը: 90—91 ուսումնական տարեշրջանում ունեցել են 5 ուսուցիչ եւ մէկ վարժուհի, ծախսել են մօտաւորապէս 650 Թուման. աշակերտների եւ աշակերտուհիների Թիւը հասած է եղել 170-ի:

91—92-ին ունեցել են 5 ուսուցիչ եւ մի վարժուհի, ծախսել են մօտաւորապէս 720 Թուման, աշակերտների եւ աշակերտուհիների Թիւը նախընթաց տարուայ վերայ աւելացել է 30-ով: 91—92 էր որ նախաձեռնութեամբ Ն. Շ. Մալինցեանի՝ կազմակերպուեցաւ „Հայուհեաց ընկերութիւնը“, որի պրոպագանդան պատկանում է պ. Թ. Մեղաւորեանին, իսկ գործունէութեան յառաջադիմութիւնը պատկանում է Լիլավայի հոգաբարձուներին: 92—93-ին հոգաբարձութիւնը վարձեց իբրեւ տեսուչ Շվէյցարիայի ուսանող Հ. Յ. Դաւիթեանցին, որի ժա-

Արդեօք ձեռք վեր կառնեն, մի անգամ ընդ միշտ, այդ խաւարի գործիչները իրանց դաւերից, և թէ այս անգամ մեզ կը պատաւորացնեն ականէ անուանէ հասարակաց դատաստանին ենշաւակութեան յանձնել նոցա անձնաւորութիւնները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԳԱՆԻՑ

(Վերջ)

Նոյն օրը, ես այցելեցի Շաւարին գիւղը որ հազիւ կէս ադաջ հեռու է քաղաքից։ Շաւարինում բնակւում են 60 տուն հայեր, բոլորն էլ պատկանում են Հայաստանեայց եկեղեցուն, մինչ քաղաքացիները երկու երեք ընտանիքի բացառութեամբ բոլորն էլ բողոքական են։ Մէկ շատ տխուր երևոյթ է որ այս գիւղացիները վարակուած են օղեվաճառութեան սխտով։ Նորանցից տարեկան բաւական թուով տղամարդիկ փոխարէն մնալու տանը իրանց ընտանիքի մօտ, և հողագործութեամբ պարապուելու, գինի և օղի են պատրաստում և տանում Թէհրան կամ Ռաշտ վաճառելու։ Ես հաւատացած եմ որ եթէ նոքա նոյնչափ աշխոյժ գործ դնեն հողագործութեան կամ ուրիշ գիւղական զբաղմունքների մէջ որչափ իրանց այդ նոր և անիծեալ արհեստի, նոցա վաստակը միևնոյնը կը լինէր և նոցա պատիւը անհամեմատ աւելի։

Այս գիւղի մէջ կան երկու ուսումնարան, երկուքն էլ Նախակրթարան, մէկը պատկանում է բողոքականներին, միւսը գիւղացիներին։ Հէնց այս վերջին ուսումնարանի համար է որ ինչպէս մէկ անգամ կարգացինք „Շաւիղում“ Շաւարինի կրթական ընկերութիւնը վճռել է տարեկան 30 թուման նպաստ ուղարկել։ Այս ուսումնարանը ես դտայ փակ, և ահա թէ ինչու։ Նորին սրբազնութիւն Եսայի եպիսկոպոսը վերջին երեք տարուայ ընթացքում ուղարկել է տարեկան 30 թուման որով կառավարուել է այս ուսումնարանը, վերջերս լուր հաղորդելով գիւղիս քահանայ տէր Գէորգին, որ այսուհետև տարեկան 15 թուման միայն պէտք է ուղարկուի ի գիւղի ուսումնարանին մի նպաստ *), ուսուցիչը մտածել է որ ուսումնարանի հոգաբարձութիւնը այլ ևս միջոցներ չը պիտի ունենայ ռոճիկը վճարելու և հետևաբար Զատկուայ արձակուրդից յետոյ այլ ևս չէ գնայեր ուսումնարան։ Բայց ուրախութեամբ լսեցի որ տէր Գէորգի ձեռք առած միջոցների շնորհիւ ուսուցիչը լսելով որ Շաւարինի Կրթական ընկերութիւնը վճռել է տարեկան 30 թուման ուղարկել ուսումնարանին, որը բարդուելով Զուղայուց եկած տարեկան 15 թումանի վերայ երաշխաւորում է իւր ամսական 3 թումանի ռոճիկը, երկու օր առաջ բացել է ուսումնարանը։ Մեր համար մեծ ուրախութիւն կը լինէր մտածել որ այս միակ ազգային հաստատութիւնը, չը պիտի դատապարտուի շուտով փակուելու, և յոյս ունինք որ Շաւարինի Կրթական ընկերութիւնը աւելի ուշադրութիւն պէտք է դարձնէ այս դպրոցի վերայ, որի գոյութիւնը այսուհետև գլխաւորապէս այդ ընկերութիւնից կախում պէտք է ունենայ։

Թողնելով ուսումնարանները և դառնալով մի ակնարկ ձգելու Համադանու քաղաքացի և գիւղացի Հայ հասարակութեան վերայ, ես չէի կարող չը ցաւել տեսնելով Համադանցիների մէջ ազգային կատարեալ անշարժութիւն, չէ կարելի ուրանալ որ Համադանցիներն այնքան ապքատ են, որ ուսումնարանների և այլ հաստատութեանց վերաբերութեամբ առանց արտաքին օգնութեան չէին կարող մէկ տասներորդն անել այն բոլորի ինչ ամերիկացիներն անում են նոցա մէջ, բայց և այնպէս չէ կարելի նորանց չը մեղադրել որ մինչև այսօր չեն աշխատել լրագիրների միջոցաւ դէթ տեղեկանալ թէ ինչ են անում ուրիշ քաղաքների հայերը։ „Շաւիղը“ որ տեղական հետաքրքրութիւն կարող է ունենալ Համադանցիների համար, ոչ մի ընթերցող չունի Համադանում։ Չեմ ուզում ասել որ Համադանցիները զուրկ են ազգային զգացմունքից, ո՛չ. բայց այդ զգացմունքը մի անկերպարան բան է նոցա մէջ։ Յոյս ունենք որ Համադանի ուսեալ անձնաւորութիւնները կը ճանաչեն իրանց պարտականութիւնը դէպի հասարակութիւնը, և կաճապարեն պարագլուխ հանդիսանալու ընդհանրութեանը և յառաջ բերելու մի շարժում, մի կեանք իրանց քաղաքում։

Յ. Զ. Միրզայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացել ենք յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածների տպագրութեան հետևեալ գումարները, որ հաւաքուած են պ. Յովսէփ Բաբայեանի նախաձեռնութեամբ։ Պ.պ. Մատթէոս Յովսեփեանց 20 դրան, Հայրապետ Տէր Յակոբեանց և Ալէքսանդր Թունեանց 10-ական դրան, Մ. Ա. Հայրապետ Թունեանց, Աղաքել Գրիգորեանց, Աբրահամ Սարումեանց, Վարդան Ա. Յակոբեանց. Յովհաննէս Մելիք Գաբամեանց, Թադէոս Մելիք Բաբայեանց Մկրտիչ Բարխուդարեանց, Պօղոս Տէր

*) Այդ տարեկան 15 թուման, բաց Եպիսկոպոսի տուած բացատրութեան. տոկոսն է մի դումարի որ յատկացուած է վերոյիշեալ գիւղին Հընդկաստանի հայերի կողմից, բայց քանի որ 6 տարի շարունակ ոչ մի բան ուղարկուած չէ եղել Շաւարին գիւղը, Եպիսկոպոսը 3 տարի տարեկան 30 թուման է վճարել փոխարէն 15 թումանի։

մանակ ուսուցիչների թիւը հասնում էր 8-ի (8-ից մէկը վարժուհի), իսկ աշակերտ-աշակերտուհիների թիւը՝ 225-ի ծախսուել է մօտաւորապէս 1000 թուման։ 91-ից մինչև 93-ը օրիորդաց ուսումնարանը բաղկացած էր I. II. և III. բաժանմունքներից, իսկ տղայոց հինգ բաժանմունքներից երկու դասարաններից։ 93-ից մինչև 94 ունեցել են 5 ուսուցիչ երկու վարժուհի, տղայոց երկրորդ դասարանը փակուել է՝ որովհետև աշակերտներին հոգաբարձութիւնը փոխադրել է Արամեան ուսումնարանը։ 93—94-ը ունեցել են 135 աշակերտ-աշակերտուհի, ծախսել են 900 թուման։ Զը մոռանամ յիշելու, որ 90-ին աշակերտ-աշակերտուհիներից ստացել են ուսման վարձ մօտաւորապէս 70 թուման, 91-ին 70 թուման 92-ին 86 թուման, 93 126 թուման։ Աշակերտ-աշակերտուհիներին բաժանուած է նրի գրքեր և տետրակներ, մօտաւորապէս 160 թումանի։ 91—94 թուականը կատարող հոգաբարձութիւնը, բացի պ. Թ. Աֆթանդրլեանից, կազմուած է եղել 89-ի ընտրուած հոգաբարձական կանոնադրութիւնից։ Երբ 90-ին հեռանում են հոգաբարձական պաշտօնից, պ.պ. Ա. Փ., Ա. Բ., Օ. Տէր Զ., մնում են միայն պաշտօնում՝ պ.պ. Թ. Աֆթանդրլեանը Ա. Գուլմասեանը, պ.պ. Ա. Մէլիք-Աբրահամեանը, Բ. Մէլիք-Սարգսեանը, Մ. Յակոբեանը, որոնք տեսնելով ուսումնարանի աննախանձելի դրութիւնը, 90-ին լիցուցիներից կազմում են մի ժողով՝ նախագահութեամբ հանգուցեալ. Ս. եպիսկոպոսի և բացում են մի մեծ հանդանակութիւն, որ մի օրում հասնում է մինչև 2230 թուման, իսկ 92-ին հոգաբարձուները տեսնելով, որ իրանց ստացած տոկոսներից, ներկայացումներից և կամաւոր նուիրատուութիւններից չի կարողանում ուսումնարանի տնտեսակաները ծածկել և եղած դրամագլխի վերայ մի բան աւելացնել, ձեռնարկում է վիճակախաղի, որը առաջ է տանում մեծ յաջողութեամբ, 92-ին ստանում է 750 թուման զուտ արդիւնք, իսկ 93-ի վիճակախաղի արդիւնքը հասնում է 900 թումանի։ Այսպէս ծայների առաւելութեամբ ընտրուած հոգաբարձուները Պողոսեան մասպարէզը իրանց կանոնադրութիւնները՝ յանձնելով նորանց ընդամենը 38 թուման կանխիկ փող և մի քանի փտած մուրհակներ, որոնցից միայն մէկը կարելի է ստացուի, եթէ միայն հոգաբարձութիւնը կարողանայ հաստատել պարոնի վերայ տոկոսներով բարդուած գումարը։ Պ. Մելիք-Աբրահամեանցը կարդալով քառամեայ իրանց գործունեութեան տնտեսական հաշիւը, դրից սրբազան առաջնորդի առաջ 4261 թուման կանխիկ մի դրամագլխի հաշիւ, որ գտնւում է զանազան յայտնի վաճառականների մօտ տոկոսով և մէկ տուն, որ գնուած է իրանց օրով։ Յետոյ սկսեց խօսել նորին սրբազնութիւնը, գովելով յիշեալ պարոնների եռանդուն գործունէութիւնը, իսկ մուրհակների մասին խօսելով՝ որոշեց, որ կամ հասարակութիւնը հաւաքէ իւր մէջ այդ փողը և կամ պահանջուի պարտականից, որից յետոյ կայացաւ նոր հոգաբարձութեան ընտրութիւնը։

Ընտրուեցան հետեւեալներ՝

Պ.պ. Ա. Մէլիք-Աբրահամեանց 60 ձայն

Յովհաննիսեանց և Յովսէփ Բաբայեանց 5-ական ղռան, եղբայրք Արշակ և Համբարձում Օհանեանց 7 ղռան, Ներսէս Շահբազխանեանց 5 ղռան, գումարը 102 ղռան;

—

Ուաշտից մեզ գրում են որ այնտեղ հանգանակութիւն է բացուել սովեալների օգտին և շարունակւում է, առայժմ ուղարկուած է 100 րուբլի „Մշակի“ խմբագրութեան: Նուիրատուների ցուցակը չենք կարող տպել աւելի յարմար կը լինէր ուղարկել „Մշակին“:

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Թէհրանի Ազգային Ուսումնասիրաց Ընկերութեան նախաձեռնութեամբ հանգանակութիւն է բացուած սովեալների օգտին և բաւականին յաջող կերպով առաջ է գնում:

—

Ուաշտի մեր թղթակիցը մեզ հաղորդում է հետևեալը. „Տեղւոյս օրիորդաց դպրոցը չունենալով մի սեպհական շէնք, հարց է ծագել մի քանի պարոնների մէջ որ տեղական թատերասիրաց և ընթերցասիրաց ընկերութիւնները եթէ իրանց ունեցած փողերը միացնեն և մի հանգանակութիւն էլ անեն կարող են պատշաճ շէնք կառուցանել, որ ծառայէ թէ դպրոցի, թէ գրադարանի և թէ թատրոնական սենեակների համար: Մի շատ գեղեցիկ միտք է այս, որ արժանի է ամենայն համակրութեան, մենք կարծում ենք, որ դա շատ շուտով կը յաջողուի, միայն եթէ փոխանակ խօսելու սկսենք գործել, նա մանաւանդ, որ կայսերական բանկի տեղւոյս տնօրէն պ. Բազիլը յայտնել է իւր պատրաստականութիւնը, ամենայն կերպով օժանդակելու այդ բարենպատակ գործին:“

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ այնտեղ վերջացաւ երկսեռ դպրոցների քննութիւնները, օրիորդաց դպրոցի առաջին տարին լինելով քիչ բան էին անցել, յուսալի է որ միւս տարի մեծ յառաջադիմութիւն կը գործեն: Յունիսի 7-ին կիւրակի օրը, այստեղ տղայոց դպրոցի սրահում վիճակախաղ կար: Վիճակախաղի գլխաւոր նիւթերը օրիորդների ձեռագործներն էին, լսում ենք, որ շատ քիչ շահ է ունեցել: Հրաւէր ենք կարդում Ուաշտի թատերասէրներին, որ զարթնեն իրանց քնից և մեծ պասից առաջ վճռուած ներկայացումը տան: Լսում ենք, որ Ուաշտի մի քանի երիտասարդների մէջ, մի տք է յղացել խընայողական մի արկղ հաստատել այստեղ դա մի շատ գեղեցիկ միտք է և մենք յաջողութիւն ենք ցանկանում:

—

Յառաջիկայ 1895 թուականի համար Ռումանիոյ Գալաց քաղաքում, արժանապատիւ տէր Ղևոնդ քահանայ Փափազեանցը ձեռնարկել է մի հայերէն և ռումաներէն օրացոյցի հրատարակութեանը: Խմբագրութիւնը և տպագրութիւնը իւր անձնական աշխատութեամբ են:

—

Մեզ գրում են Դավրէժից հետևեալը. „Մինչև այս օրերը միայն մամուլի միջոցով էինք ծանօթանում սովից, ցրտից տանջւող մերկ, թափառական, թշուառ ընտանիքների կացութեան հետ, բայց ահա, այսօր անողոք քաղցը դրանց ստիպեց գիւղից-գիւղ, քաղաքից-քաղաք մի կտոր հացի համար թափառելով հասնել մինչև մեզ մօտ. մենք այսօր, ոչ թէ անշունչ թղթի, այլ նոցա կենդանի պատկերների վերայ կարդում, տեսնում ենք այն տանջանքները, որ մի պատառ հացի համար թողնելով հայրենիք, տուն, տեղ ակամայ յանձն են առել մուրացկանութիւնը: Դավրէժի փողոցներում, անխտիր, հայի, եւրոպացու դռները ծեծում՝ հաց են խնդրում, և շատերը անողորմաբար անարգելով յետ են մղում այն դողդող ձեռքը, որ սովից տանջւող անօգնական ընտանիքի համար երկարացել է դէպի իրանց: Մեր առաջարկութիւնը այս է, որ յարգելի քաղաքացիներից կազմուէր մի մասնախումբ. խումբը կրկին ձեռնարկէր հանգանակութեան և քաղաքացիների կամաւոր տուրքով բաց անէր մի ճաշարան. տեղի համար առայժմ յարմար է Լիլաւայի թաղի ուսումնարանը, ուր նաև կարող են գիշերել, վերջապէս ժամանակ է, որ մարդասիրաբար մեր թշուառ հայրենակիցներին ցոյց տանք կարեկցութիւն, գործադրենք այն միջոցները, որով մասամբ թեթևացրած կը լինենք նրանց անպատմելի վիշտը և կատարած մեր մարդկային պարտքը:“

—

Նոյն տեղից գրում են որ. „Շաւիղի“ 23-դ թուի ներքին լուրերի մէջ, կարդում ենք մի թղթակցութիւնից քաղուած այն լուրը, որպէս թէ „Դավրէժու բողոքականների տղայոց դպրոցի վարչութիւնը որոշել է այլ ևս լուսաւորչական ուսուցիչ չը պահել:“ Ինչպէս ամեն մի ընթերցողի, մեզ ևս այս լուրը տարօրինակ թուեց, չորս տարի առաջ Դավրէժում տեղի ունեցաւ բողոքական երէցների ընդհանուր ժողովը՝ բաղկացած 20—25 անդամներից, որոնցից երկուսը միայն հայեր, իսկ մնացեալները ասորիներ էին այդ ժողովում արծարծուեցաւ այն հարցը, թէ բողոքական ուսումնարաններում լուսաւորչական ուսուցիչներ չը պէտք է պահուին, (ի հարկէ ընթերցողը պէտք է իմանայ որ այդ առաջարկը գալիս էր ասորիների կողմից.) բայց դպրոցի տեսուչը՝ պ. Ուըլսընը և հայ քարոզիչները հակառակեցին, որ չի կարելի այդ խտրութիւնը ընդունել, լուսաւորչական և բողոքական ուսուցիչները կընդունուին մեր դպրոցներում, այն պայմանով, որ նրանք լինին լաւ բարոյականի տէր, ճշմարիտ դաստիարակներ:

—

Նոր-Ջուղայից մեզ հաղորդում են հետևեալը: „Յունիսի 18-ին, կիրակի օրը Ջուղայեցիք մի բաւական նշանաւոր կորուստ ունեցան յանձին արժ. հայր տէր-Եղիշէ Յ. Մկրտումեանի: Հանգուցեալը գիտնական և արժանաւոր քահանաներից մէկն էր, իւր կեանքի մի մասը նուիրած էր ազգային լուսաւորութեան գործին: Երիտասարդ հասակում երկար ժամանակ ուսուցիչ էր Մահլաթ թաղի ս. Մինասայ դպրոցում, իսկ վերջին տարիներում՝ ս. Սանդխտեան օրիորդաց և Կեդրոնական հայոց դպրոցներում կրօնուսոյց էր: Զը նայելով բնտիր կրօնական [illegible]

Թ. Աֆթանդէլեան	58	ձայն
Ն. Փանուէլեան	39	„
Բ. Մելիք-Սարգսեանց	31	„
Ա. Գուլմասեանց	29	„

իսկ կանտիտատնիր ընտրուեցան

Պ. պ. Մ. Յովսէփեանց	95	ձայն
Մ. Ցախովբեանց	25	„
Ա. Սարգսեանց	27	„

Յետոյ կարդացուեցաւ նրէցփոխի հաշիւը, որից յետոյ որոշուեցաւ, որ այսուհետեւ նրէցփոխի պաշտօնը կատարէ հինգ հոգաբարձուներից մէկը. ունենալով հաւասար ձայն հոգաբարձական ժողովներում: Կազմուեցաւ երկու արձանագրութիւն որոնց ստորագրեցին ժողովականները: Բայց մի բան ինձ շատ զարմացնում է, այն է պ. Ա. Փանուէլեանի եւ Ա. Գուլմասեանի ընտրուիլը, պարոնայք Լիլաւայինիր ինչու չէք հետաքրքրւում եւ հարցնում յիշեալ պարոններից, ինչու խոյս տուին 89-ի ընտրութիւնից, իսկ ներկայ ընտրութեան ժամանակ յատուկ վարձկան պրօպագանտիստներով, փեսաներով ու խնամիներով եւ վերջապէս քաւորներով ամեն ճիգ թափուեց որ վերոյգրեալ պարոններին ընտրուին...... խօսել հոգաբարձուների քառամեայ գործունէութեան մասին մենք հարկ ենք համարում յիշել նոցա փոխադարձ յարաբերութիւնները ուսուցիչների հետ, շատ չերկարացնելու համար կարծեմ այսպէս ասելով պարզուած կը լինի ընթերցողներին. ամեն ժողով հոգաբարձուները կազմել են ուսուցիչների հետ՝ ընկերաբար, ամեն գործ ամեն գործ ձեռնարկել են ընկերաբար: Քանի որ ուզում եմ վերջացնել թղթակցութիւնս աւելորդ չեմ համարում այս էլ ասելու, որ ամեն նախատինք եւ հայհոյանք, որը շատ յաճախ է պատահում մեզ մօտ ուղղուած ուսուցիչների հասցէին, տարեկին միասին:

Տ.

20 Յունիսի 94 Դավրէժ

կասութեանը, նա իւր կառավարած դպրոցի համար անյարմար դասագրքերից եւս կարողանում էր օգուտ քաղել և նրանց իբրև հիմն վերառնելով՝ կենդանի կերպով աւանդում էր ուսանողներին քրիստոնէական կրօնի ուսումն, այդ իսկ էր պատճառը որ կարճ ժամանակում կարողացաւ գրաւել աշակերտների ուշադրութիւնը: Թաղումը կատարուեցաւ շատ հանդիսաւոր կերպով. նախ Եկեղեցու բակում՝ դագաղը վեր դրած միջոցին, Կեդրոնական դպրոցի աշակերտներից մէկը կարդաց երկսեռ ուսանողների կողմից մի սրտառուչ դամբանական, այնուհետև երբ դագաղը դուրս եկաւ փողոցը՝ նոյն աշակերտներից չորս հոգի բռնած տանում էին առջևից երկու շքեղահիւս պսակներ, մէկը օրիորդաց իսկ միւսը տղայոց դպրոցի կողմից նուիրուած: Ուսուցիչներն պատիւ համարեցին յարգել իրանց արժանաւոր աշխատակցի յիշատակը, կրելով իրանց ձեռքերում հանդուցեալի գագաղը: Յուղարկաւոր անձանց մէջ աչքի էին ընկնում բազմաթիւ նշանաւոր անձինք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

—

Թիֆլիս 5 Յունիսի 94

Այս օրերս այստեղ վախճանուեց յայտնի հարուստ Ե. Զիմախանցը Քաղումը շատ շքեղ էր, ինչպէս սովոր ենք առ հասարակ շքեղ կերպով միայն Քաղումներ անել: Ոչ մի կտակ չէ Քողել. այդպիսի մարդիկ, որ իրանց մեռնելուց յետոյ էլ ոչինչ չեն նուիրում աղքին այլ եւս ում վ՝բայ յոյս ունենայ ազգը:

Այս օրերս տեղիս զինուորականները կազմեցին մի ընկերութիւն „Զինուորական խնայողական ընկերութիւնը:“ Կառավարութիւնը այդ ընկերութիւնը հաստատեց և դրամական մեծ օժանդակութիւն տուաւ նորան նա բացել է իւր պահեստները և օֆիցէրներին վաճառում է շատ աժան գնով և ապառիկ ամեն առարկայ՝ Ք է կենսական մթերքներ, Ք է հագուստ, Ք է չՔեղէն և այլն: Ասում են, որ քաղաքացիական ատիճանաւորներն էլ մտադիր են իրանց համար էլ մի նոյնատեսակ ընկերութիւն հաստատել *), այդպիսով Թիֆլիսի վաճառականութիւնը ինկնելու տագնապի մէջ է:

Կ. Կ.

*) Որչափ գիտենք Թէհրանի հայոց խնայողական ընկերութիւնն էլ այդպիսի նպատակով էր կազմուած. բայց Ք է ինչ է անում նոյն ընկերութեան գործադիր ժողովը, որ դեռ գործի չէ սկսել, մենք չը գիտենք: Եթէ խնայողական ընկերութիւնը կազմուելու էր փող տոկոսի տալու համար, ներողութեանը չարժէր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզից հեռագրում են որ Կարնօի սպանողի անունը Սանդօ մի իտալացի է քննութեանց ժամանակ գորա պատճառը նա չէ յայտնել, և ոստիկանութիւնը հազիւ կարողացել է քաղաքացիների կատաղութեան ձեռքից ազատել նրան, որոնք ուզում էին նրան կըտոր կտոր անել: Անգլիոյ, Իտալիոյ, Սպանիոյ և Ամերիկայի պարլամենտական ժողովներն յաւակցութիւն են յայտնել, Ֆրանսացի ազգին և տէրութեան. Իտալիոյ տէրութիւնը սաստիկ յաւում է որ Կարնօի սպանողը իտալացի է, թագաւորը ևՔ Ֆրիսիին իրանց Փարիզ ուղարկած յաւակցութեան հեռագիրներ մէջ ասել են, որ անարիստները հայրենիք չունին և մարդկային սեռի թշնամի են:

—Նոյն տեղից հեռագրում են որ Փարիզում, և Ֆրանսիայի ուրիշ գաւառներում. իտալացիների նկատմամբ ամենամեծ ոգեւոր են լինում, անցեալ ամսոյ 25 ին Տուլոնում, մի քանի իտալացի նաւաստիներին սաստիկ ծեծել և մէկին սպանելու մօտ են եղել, Մարսէյլում և Լիոնում հասարակութիւնը յարձակուել է իտալացւոց սրճարանների վերայ, Կարնօի մարմինը ազգի կողմից թագաւորական շքեղութեամբ է վերցուելու:

Արտօնատէր—Հրատարակիչ
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1894 թ. Յունիսի 10-ին Թաւրէզի Լիլավայի Քաղի երկսեռ դպրոցների օգտին կայացած երկրորդ վիճակահանութեան ժամանակ տանող տոմսերը ելել են հետեւեալները:

№	գնան	№	գնան
1787	— 3000	15	— 50
1897	— 1000	1311	— 50
77	— 1000	129	— 50
39	— 1000	914	— 50
968	— 500	555	— 50
325	— 500	837	— 50
518	— 500	1617	— 50
1101	— 250	957	— 50
1930	— 250	1860	— 50
1968	— 250	2045	— 50
498	— 250	1412	— 50
169	— 250	19	— 50
138	— 100	773	— 50
1441	— 100	1363	— 50
65	— 100	746	— 50
1445	— 100	542	— 50
324	— 100	1557	— 50
554	— 100	1078	— 50
503	— 100	1887	— 50
1209	— 100	732	— 50
320	— 100	1492	— 50
448	— 100	1872	— 50
1333	— 100	1696	— 50
395	— 100	842	— 50
91	— 100	339	— 50
1064	— 100	458	— 50
834	— 100	459	— 50
1820	— 50	1926	— 50
849	— 50	643	— 50
1395	— 50	996	— 50
1100	— 50	1103	— 50
477	— 50	297	— 50
178	— 50	253	— 50
1272	— 50	1629	— 50
1148	— 50	707	— 50
1331	— 50	2070	— 50
1939	— 50	1705	— 50
1901	— 50	248	— 50
851	— 50	201	— 50
1141	— 50	723	— 50
737	— 50	1748	— 50
578	— 50	2002	— 50
1322	— 50	363	— 50
1943	— 50	141	— 50
82	— 50	910	— 50
1463	— 50	525	— 50
2023	— 50	1888	— 50
979	— 50	768	— 50
709	— 50	596	— 50
1065	— 50	691	— 50
1302	— 50	1324	— 50

„Սեր“ ընկերութիւնը բաց է անում գրաւաճառաւոց Թաւրէժում եւ կոմիսիօնով ընդունում է ուսումնարանական ամեն տեսակ դասագրքեր, գրքեր եւ առարկաներ: Պայմանների մասին դիմել,

Tauris (Perse) Comité d'Instruction arménienne „SER“

Թէհրանի Հայկազեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ, կրօնի, հայոց լեզուի, հայոց պատմութեան, բուսաբանութեան եւ աշխարհի: Մի վարժուհի, կար ու ձեւի, ձեռագործի, հայոց լեզուի, եւ բուսաբանութեան ամեն մէկը շաբաթական 26 ժամ դասով: Պահանջւում է կանոնաւոր դպրոցի վկայական: Պայմանների համար դիմել „Շաւիղի“ խմբագրութեան:

„ՄՈՒՐՃ“

ԳԱՂԱՓԱԿԱՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹՎԻՆ ԿԱՆԻՆ ՀԱՄԱՐՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 բուբլի

Բաժանորդագրութեան համար դիմել՝ խմբագրութեանը Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատունումը Լաղեզար փողոցում Թէհրանում. տասնիրումանուչափ եւ աւելի գնողի համար, սովորական արժէքից զիջում կը լինի: Գիշեր ժամանակում եւս դեղատունը բաց է: